

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՅ

Ա. Հառությունյանին

ՀՀ ԲԱՂԱԶԱՑԻ

Արմինե Մկրտչյանից

(դիմողի անուն, ազգանուն)

Միրաբյան 3/1, (093)54-55-06

(ընկալության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

Lus.davtyan.88@mail.ru

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Դիմում՝ խորհրդի նախագահի անունը


2. Ամփոփ տեղեկանք՝ վերջին երկու տարում ծավալած գործունեության
վերաբերյալ.

3. Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության
ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ.

4. Հակիրճ վերուժություն՝ վերջին երեք տարիների ընթացքում
նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի
կամ սպորտի և երիտասարդության քննադատականներում իրականացվող
քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝

29.11.2019թ.



Անփոփ տեղեկանք վերջին երկու տարում ծավալած

գործունեության վերաբերյալ:

- 2015թ. սեպտեմբեր ամսից առ այսօր աշխատում եմ Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում, որպես՝ դաշնամուրի դասախոս:
- 2018թ. ապրիլ ամսից առ այսօր աշխատում եմ Երևանի Էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջում, որպես՝ դաշնամուրի դասախոս:
- 2019թ. մարտ ամսին Երևանի Կ. Գ. Մ. Ս. նախարարության կողմից նշանակվել եմ Երևանի քաղաքապետարանի <<թիվ 174 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ:
- 2018թ. դեկտեմբերի 9— ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում վստահված անձ՝ <<Իմ քայլը>> դաշինքի կողմից:
- Ստացել եմ հավաստագիր ԱՄՆ ԱԶԳ-ի հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի աջակցությամբ <<Ապագան քոնն է>> հասարակական կազմակերպության կողմից իրականացվող <<Կրթությունը կոռուպցիայի կանխարգելման միջոց>> ծրագրի շրջանակներում իրականացված հակակոռուպցիոն դասընթացներին և երիտասարդական միջոցառումներին ակտիվ մասնակցության համար:
- 2018թ. -ից <<International TV>> լրատվական կայքի լրագրող, <<Հարցումների շարք>> հաղորդման հաղորդավարուհի:
- 2018թ. <<Arm Stars dance>> պարային համույթի հիմնադիր տնօրեն և գեղարվեստական ղեկավար:
- 2018-2019թթ. <<Art Face casting>> ընկերությունում՝ գլխավոր մենեջեր:
- 2018թ. սովորել եմ <<Globe>> դերասանական ստուդիայում:

- 2010թ. -ից առ այսօր նկարահանվում են ֆիլմերում, գովազդներում, տեսահոլովակներում:
- 2018թ. — ՀՀ Կ.Գ.Մ.Ս. նախարարության կողմից ստացել են վկայական առ այն, որ, որպես Երևանի Ռ. Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի դասախոս վերապատրաստվել են «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից «Կարողություններին միտված ուսումնասրության գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության բարձրացում» ծրագրով:
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համակիր են: Ակտիվորեն մասնակցել են թավջառ հեղափոխությանը, Երևան քաղաքի քաղաքապետի ընտրությունների, Ազգային ժողովի ընտրությունների, Արևիյան քաղաքի քաղաքապետի ընտրությունների քարոզարշավներին և երթերին:

Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կ.Գ.Մ.Ս. նախարարության արձանագրած վերջին երկու տարիների ձեռքբերումները , ակտիվ գործունեությունը և՛ կրթության, և՛ գիտության, և՛ մշակույթի, և՛ սպորտի ոլորտներում, ես՝ Արմինե Մկրտչյանս, ցանկություն ունեմ համալրվելու Երևանի Կ.Գ.Մ.Ս. նախարարին կից հասարակական խորհրդում, և իմ ակտիվ գործունեությամբ օգտակար լինել մեր մշակույթի զարգացմանը: 2009-2015թթ. Երևանի Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիայում ուսանելուս տարիներին հանդիսացել եմ Ե.Պ.Կ. ուսանողական խորհրդի անդամ, ակտիվորեն զբաղվել հասարակական գործունեությամբ. միջբուհական միջոցառումների՝ համերգների, Երևանին նվիրված միջոցառումների, պարային ֆլեշմոբերի, լուսանկարների ցուցահանդեսի, թատերական ներկայացումների, «Ռեբախ ավտորուս» երաժշտական ծրագրի կազմակերպմամբ, «Ռեբախների և հնարամիտների» ակումբի, «Ի՛նչ, որտե՛ղ, ե՛րբ >> ինտելեկտուալ խաղի, «Բոլոնյան համակարգի» քննարկումներին:

Ստացել եմ շնորհակալագրեր Երևանի բաղաբապետարանի կողմից Երևանին նվիրված միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին ակտիվ մասնակցելու և այդ գործերում ներդրած ջանքերի համար: Հանդիսացել եմ «Մեկ

ազգ մեկ մշակույթ>> ժողովրդական և ազգագրական պարերի սրբույթ -

փառատոնի դափնեկրի կոչման:

Հաշվի առնելով նաև մշակույթի ոլորտում ներկայիս ծավալած մանկավարժական գործունեությունն, ուսանողների հետ մշտական շփումն ու կապը, առկա խնդիրներին տեղեկացված լինելս (մասնագիտական առարկաների ուսուցումը Է՛լ ավելի խորացնելու ուսանողների ցանկությունը), կարող եմ իմ գիտելիքներով և տեղեկություններով օգտակար լինել: Կարծում եմ առկա խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ քննարկումների շնորհիվ կարող եմք հասնել Է՛լ ավելի լավ արդյունքի, շարունակելով արդեն իսկ մեծ քայլերով առաջ շարժվող նախարարության արդյունավետ գործունեությունը:

ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՎԵՐՁԻՆ 3 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԿԱՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱՍ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՔՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ-ում տիրող անարդարության, կոռուպցիայի, կեղծիքի հետևանքով ժողովրդի մեջ բողոքի այլք բարձրացավ. ոչ բռնի, խաղաղ գործողություններով ուղեկցված ցույցեր, երթեր քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումներ, որոնցից անմասն չեմ մնացել նաև ես, և իմ ակտիվ մասնակցությունն եմ ունեցել քաղաքական այդ արդարացի պայքարում, որի հանգուցալուծումը եղավ ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը:

Հ ԿԳ ՄՍ նախարարությունը և իրեն ենթակա կառույցները ժառանգել են բազմաթիվ խնդիրներ, որոնք կուտակվել են տարիների ընթացքում կոռուպցիայի, սխալ քաղաքականության պատճառով, ինչպես հանրակրթական այնպես էլ միջնակարգ և բարձրագույն կրթության ոլորտներում:

Կրթության ոլորտի երկարաժամկետ ռազմավարությունն ամրագրելու նպատակով 2018թ-ին իրականացվել են «ՀՀ Կրթության մինչև 2030թ.-ը զարգացման պետական ծրագրի» հաստատմանն ուղղված քայլեր: ՀՀ Կառավարության 2018թ-ի գործունեության կրթության ոլորտի միջոցառումները, ՀՀ կրթության և գիտության նախարարության գերակա խնդիրներն ուղղված են կրթության որակի հասանելիության և մատչելիության բարելավմանը՝ համակարգի բովանդակային, իրավական դաշտի ամրապնդման և կառավարման արդյունավետության բարձրացման ճանապարհով:

1. Գալիք տարում կրթության ոլորտին պետական բյուջեից կհատկացվի 145 մլրդ 991 մլն դրամ, որն ընթացիկ տարվա հատկացումից ավելի է 18,9 մլրդ դրամով:

2. Առաջին անգամ պետական մակարդակով սահմանվել է ուսուցչի նվազագույն աշխատավարձ՝ մեկ դրույքի համար առնվազն 108.000 դրամ:

3. 3 ու կես անգամ ավելի գումար է հատկացվել բյուջեում ուսուցիչների և աշակերտների տրանսպորտային ծախսերի փոխհատուցման նպատակով: 276 մլն դրամ 2019թ-ի 79մլն դրամի փոխարեն (7 մարզի փոխարեն ընդգրկելով բոլորը):

4. 2020 թվականի ՀՀ պետական բյուջեից ԿԳՄԱՆ-ին հատկացված միջոցներով հիմնովին կնորոգվի և կվերակառուցվի 8 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն և ՀՀ մարզային հանրակրթական դպրոց:

5. Չարենցավանում շահագործման է հանձնվել Արա Մանուկյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի նոր շենք:

6. Կառավարությունը հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների համար մարզագույք ձեռք բերելու նպատակով հատկացրել է 523 մլն դրամ:

7. Ընդլայնվել են կեցության փոխհատուցում ստացող ուսանողների խմբերը:

8. 834 մլն դրամի կհատուցվի 284 ինժեներական լաբորատորիաների ստեղծման համար:

9. Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ծրագրից տնտեսվել է 157 մլն դրամ, որից 16 մլն դրամը ուղղվել է 7-13 տարեկան երեխաներին՝ մարզերից ճամբարներ տեղափոխելու և վերադարձի տրանսպորտային ծախսերին:

10. Արագածոտնի մարզում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի կառավարումն ու իրականացումը, ՄԱԿ-ի «Պարենի» համաշխարհային ծրագիրը պաշտոնապես փոխանցել է ՀՀ Կառավարությանը՝ ի դեմս նախարարությանը: Արագածոտնը դարձել է 6-րդ մարզը՝ Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց Ձորի և Արարատի մարզերից հետո, որտեղ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը արդեն իրականացվում է ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ:

11. Գիտության և մշակույթի ոլորտներին կհատկացվի ավելի քան 1 մլրդ դրամ:

12. Գիտության ոլորտը խնայելու նպատակով Հայաստանը անդամակցել է Intel գիտատեխնիկական փառատունին:

13. Նախարարության և մասնավոր սեկտորի համագործակցությամբ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դիմորդներին սկսել է առաջարկել աշխատակցում պահանջված նեղ մասնագիտություններ:

14. Այսուհետ անվանական կրթաթոշակ կատարման նաև օլիմպիադաներում բարձր արդյունք ցուցաբերած աշակերտները:

15. Մինչև 2024 թվականը 5-6 տարեկանների 90% և 3-6 տարեկանների 70%-ն ընդգրկված կլինեն նախադպրոցական հաստատություններում:

16. Նախարարությունը սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ նախաձեռնել է «Դաս Ա» ծրագիրը, որի շրջանակներում Սերգեյ Սմբատյանն ու նվագախումբն այցելել է դպրոցներ, պատմել դասական երաժշտության ու կոմպոզիտորների

մասին: Աշակերտներն այցելել են համերգասրահներ ու վայելել դասական երաժշտությունը:

17. «Դասարան + դասական» նախագծի շրջանակներում ավագ դպրոցի շուրջ 60 աշակերտ ոլորտի արհեստավարժ մասնագետների շնորհիվ հնարավորություն էր ստացել ծանոթանալու դերասանական արվեստին և թատրոնի կյանքին:

18. Դպրոցական սրնոմենտների համակարգի ներդրման շնորհիվ՝ թանգարան այցելուների թիվը 31%-ով աճել է նախորդ տարվա համեմատ: 2018թ. առաջին կիսամյակ՝ 463 հազ, 908 այցելու, 2019թ. առաջին կիսամյակ՝ 607 հազ. 797 այցելու:

19. Հանրակրթական դպրոցներում իրականացվել է «Քո արվեստը դպրոցում» ծրագիրը, որը միտված է այլընտրանքային կրթության նորարական հարթակ դառնալու: Ծրագիրն իրականացվում է 3 ուղղություններով՝ գրականություն, երաժշտություն, կերպարվեստ:

Գտնիի տարածքում շուտով կսկսվի հայտնի բաղնիքի խճանկարի տարածքի բարեկարգումը:

Կրթության ոլորտում առաջիկա տարիներին ակնկալվում է, որ բոլոր մակարդակներում բարձրացվի կրթության մատչելիությունը, ստեղծվեն հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան բարելավվի կրթության որակը, այն համապատասխանեցնելով ընդունված միջազգային չափանիշներին, ապահովվել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ, աշխատավարձերի բարձրացում, միջին մասնագիտական կրթական հաստատությունների, (քոլեջների)

Կրթության, Գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կատարած աշխատանքը ահռելի մեծ է և գնահատելի. ե՛կ կրթության, ն՛ գիտության, ն՛ մշակույթի, և՛ սպորտի բնագավառներում նախարարությունը ջանք ու եռանդ չի խնայում մեր երկիրը դարձնելու է՛լ ավելի հզոր, է՛լ ավելի մրցունակ, է՛լ ավելի մշակութային:

Առանձնացնեն ընդամենը մի քանիսը մշակույթի ոլորտում:

Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագիրը, որի շնորհիվ արդեն կայացել են 16 հազեցած տպավորություններով լի փոխայցելություններ, որոնց ընթացքում իրականացվել են համերգային ելույթներ, պատմամշակութային տեսարժան վայրերի այցելություններ, և ծրագիրն ըստ իս միմիայն դրական ազդեցություն ունի, քանի որ շնորհիվ այս ծրագրի հարյուրավոր պատանիներ ձեռք են բերում նոր ընկերներ, դպրոցների միջև կապն է՛լ ավելի է ամրապնդվում և մեծանում է հավանականությունը, համատեղ ծրագրերով հանդես գալու:

ՀՀ Կրթության, Գիտության, մշակույթի, սպորտի և ախարարության աջակցությամբ, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի նախաձեռնությամբ Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցած ՀՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ռոբերտ Սմիթիսանյանի ծննդյան 80-ամյակին նվիրված «Այստեղ Հայաստանն է» խորագիրը կրող համերգը և մի շարք մշակութային միջոցառումներ, որոնք նպաստում են Հայաստանի մշակութային կյանքի զարգացմանը: